

W. Freund

Algebraische Geometrie  
Vorlesung 1931

Algebra 1931

902.6

R-84

1931



Հ. ՅԱԿՈԲ Ժ. Վ. ԳՕՍԵԱՆ  
ՄԻԻԹ. ՈՒԽՏԷՆ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ  
ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ Կ.ՊՈԼՍՈՅ

ՈՎՆԱԲԿ ՄԸ ՆԱԽԿԻՆ ՆԻ ԱՐԴԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՎՈՐԵՐՈՒՆ ՎՐԱՅ-  
ԺՐԻՄՆԵՐՈՒ՝ ԴԱՄՐԱՐԱՆՆԵՐՈՒ ՑԻՁԱՅԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



902.6  
Բ-84

Վ Ի Ե Ն Ն Ա  
Մ Ե Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1931

- 5 OCT 2011

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ  
ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ Կ.ՊՈԼՍՈՅ

---

2.6

84

Հ. ՅԱԿՈՒԲ Ժ. Վ. ԳՕՍԵԱՆ  
ՄԽԻԹ. ՈՒԽՏԷՆ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ  
ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ Կ.ՊՈԼՍՈՑ

ԱՐԿ ՄԸ ՆՈՒԿԻՆ ՆԻ ՈՐԴԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՆ ՎՈՅՐԵՐՈՒՆ ՎՐՈՑ.  
ՁԻՐԻՄՆԵՐՈՒ՝ ԴՈՄԱՐԱՐԱՆՆԵՐՈՒ ՅԻՓԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Վ Ի Ե Ն Ն Ա  
Մ Ն Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն  
1931

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Աստ կենցաղոյս վերջալոյս  
Յաւիտենից Արշալոյս:

Աշխատասիրութիւնս չէ գիտական՝ ոչ ալ ուսումնական, այլ պարզ ննջեցելոց յիշատակն անմոռաց ընելու աշխատութիւն մը: Ամէն քրիստոնեայ ազգ յարգած է իւր մեռեալներու յիշատակը եւ վերջին հանգստեան վայրը՝ Գերեզմանատունները եւ չքեղապէս դարդարած: Նուիրական սրբավայրեր նկատած է մեր ազգն ալ գերեզմանատունները, եւ անցեալ դարերու ժամանակ աւելի յարգանք ընծայելով ննջեցելոց, եկեղեցիներու մօտ՝ շուրջը ըրած է գերեզմանավայրերը. շիրիմներով՝ դամբարաններով՝ յիշատակագրութեամբ, ծառերով ծաղիկներով դարդարած: Սակայն ժամանակը ոչ միայն կը փոխէ դւրաւոր գեղեցիկ սովորութիւնները, այլ նաեւ կը ջնջէ կ'աւրէ նոյն իսկ քարերու յիշատակագրութիւնները:

Կ. Պոլսոյ Կաթ. Հայոց նախկին եւ նոր գերեզմանատունները այցելութիւն ըրած ժամանակս կը տեսնէի գերեզմանաքարերու վրայ փորագրուածներէն՝ ոմանք անընթեռնելի դարձած, ոմանք սկսած են մաշիլ, օրեր տարիներ յետոյ ասոնք ալ անընթեռնելի դառնալու վտանգին մէջ: Տեսայ գերեզմանաքարեր ալ որոնք կտոր կտոր եղած ասդին անդին ձգուած էին:

Այս քարերուն տակ հանգչող ննջեցելոց յիշատակն յարգելու նպատակաւ ձեռնարկեցինք գրի առնել այն ամէն շի-



24571-59

g

ըրիմներու քարերու՝ խաչերու վրայ փորագրուած՝ գրուած յիշատակագրութիւնները, մինչեւ 1929 տարւոյ վերջը գրտնուածները տեսնուածները: Միայն Կ. Պոլսոյ քաղաքին նախկին գերեզմանավայրերու համառօտ պատմութիւնը յիշատակելէ յետոյ կը զննե՞ք զանոնք եւս մի առ մի:

«Աստ կենցաղոյս վերջալոյս, Յաւիտենից Արշալոյս» գրուած տեսայ քարի մը վրայ: Այո՛ գերեզմանավայրն է վերջալոյս մեր անցաւոր կենաց, ուր կը ծագի Արշալոյսն մեր յաւիտենական երջանիկ կենաց: Տէր արժանի ընէ այն յաւիտենական Արշալոյսին զամէնքն ալ որ կը հանդէին եւ պիտի հանդէին օր մը գերեզմանատանս հողին տակ:

Կ. Պոլիս, 30 Դեկտեմբեր 1929:

## ԸՆԳԻՅԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՄԸ

### ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՆՑ ԳԵՐԵԶՄՆԵՍԱՆՑ ՎՐԱՅ

Ա. Կ. Պոլսոյ քրիստոնեայ հասարակութիւններն անցեալ տարիներու դարերու ժամանակ՝ իրենց ննջեցեալները կը թաղէին ընդհանրապէս իրենց պատկանեալ եկեղեցիներու շուրջը գտնուած վայրերուն մէջ, կամ ոչ այնչափ հեռի Աստուծոյ նուիրեալ տաճարներէն: Քրիստոնեայ ժողովրդեան ունեցած այս սովորութիւնը կը հաստատէ Belin անուն անձը իւր «Histoire de la Latinité de Constantinople» երկասիրութեան մէջ: Երբ 1560 թուականին Կ. Պոլսոյ մէջ պատահած համաճարակ ժանտախտը՝ հազարաւոր մարդկանց կենաց վերջ կու տայ, սոյն հիւանդութեան վարակման առջեւն առնելու նպատակաւ, կառավարութիւնն կ'արգելէ այլ եւս եկեղեցիներու շուրջը կամ մօտը մեռեալներ թաղելը: Սոյն թուականին Պոլսոյ քաղաքին բնակչութիւնն աւելի Ղալաթիոյ եւ Բերայի վարի կողմերը կը գտնուէր. այս կրկին թաղերուն մէջ էին ժողովրդեան՝ մանաւանդ քրիստոնեայ հասարակութեանց տուները կրպակները եւ ամէն բան: Բերայի վերի մասը, Թաքսիմ անուանուած տեղը եւ Թաքսիմէն դէպի վեր՝ արեւելեան հիւսիս կողմը կը գտնուէին ընդարձակ գետիններ, այժմեան Թալիմհանէի՝ Հարիպէի՝ Բանկալթի կողմերը, ամայի հողեր գետիններ, եւ ահա սոյն տեղերը կ'ըլլան գերեզմանատուններ: Յունաց գերեզմանատունը կ'ըլլայ՝ այժմ

իրենց Ս. Երրորդութիւն անուանեալ եկեղեցւոյն վայրը եւ մաս մըն ալ Թալիմհանէ անուանեալ տեղը: Լատինաց զերեզմանատունը կ'ըլլայ՝ այժմ Հասարակաց Պարտէզին տեղը (Jardin Public). Եւ դէպի վեր հայոց զերեզմանատունը՝ այժմեան Հարպիէ անուանեալ զօրանոցի հարաւային կողմը:

Այսպէս գրեթէ երեք դար 1560 մինչեւ 1865 թուական սոյն վայրերը կ'ըլլան եւ կը մնան իբր զերեզմանատուն քրիստոնեայ ժողովրդեան: Յընթացս երկու երեք դարու Կ. Պոլսոյ բնակչութիւնը երթալով կը բազմանայ. Բերայի թաղը երթալով կ'ընդարձակուի. Թաքսիմէն սկսեալ աւելի վեր բնակարաններ՝ տուներ կրպակներ կը շինուին. Բանկալթի եւ յետոյ Շիշլի նորագոյն թաղեր կը կաղմուին, կը զարգանան հեզհեռէ այս կողմերն ալ ամէն տեսակէտով: Տեղական՝ քաղաքական այս զարգացման յառաջագիւծութեան միջոցին, 1865ին կրկին համաճարակ հիւանդութիւն մը՝ քուլերան՝ կը սարսափեցընէ Պոլսոյ բնակիչները, Կառավարութիւնը տուներու՝ բնակարաններու մօտ ննջեցեալ թաղելը վտանգաւոր նկատելով, այս անգամ եւս համաճարակ հիւանդութեան առջեւն առնելու նպատակաւ, կ'արգելու այս կողմերն ալ այլեւս ննջեցեալ թաղելը:

Բ. Սոյն թուականէն շատ յառաջ, Գաղղիական կառավարութիւնը զնամ էր գետին մը Բանկալթիի վերի կողմերը եւ ըրած էր զերեզմանատուն իւր զինուորաց համար: Խրիմի անուանեալ պատերազմի միջոցին մեռնող զինուորները կը թաղուէին այն տեղ. ինչպէս յայտնի կը տեսնուի զերեզմանատանս առաջին կարգի ճամբուն մէջտեղը կանգնուած շիրիմէն, չորեքանկիւն բարձր սիւն մը, որուն երեք կողմը վերէն վար գրուած է այն կոթողին ներքեւ թաղուածներու անունը եւ մէկ կողմն ալ քանդակեալ՝ գրուած հետեւեալ սողերը.

Aux Medecins  
Militaire Français  
Morts  
A l'Armée d'Orient  
1854—1856.

Նոյնպէս նաեւ զերեզմանատանս երրորդ կարգի ճամբուն վրայ կը տեսնուի քարահիւս դամբարան մը, մէկ կողմը գրուած հետեւեալը.

A la Mémoire  
des Militaires Français décédés  
A Constantinople  
Pendant la Guerre d'Orient  
1854—1856.

Կը տեսնուին նաեւ ուրիշ շիրիմներ ալ որոնց վրայ քանդակուած գրութիւնները՝ սոյն թուականին հոն թաղուած զինուորաց կը պատկանին: Սոյն զերեզմանատունս ոչ միայն Գաղղիացի զինուորաց վերջին հանգստեան վայր մըն էր, այլ նաեւ Իտալացի զինուորաց: Գերեզմատանս մէկ կողմը կը տեսնուի բուրգի ձեւով շինուած շքեղ մեծ դամբարան մը, որուն տակ թաղուած են սոյն պատերազմի միջոցին մեռնող Իտալական զօրաց մարմինները, եւ որուն մէկ կողմը գրուած են հետեւեալ սողերը:

Alle Reliquie  
Dei Soldati Italiani  
Morti Nell' Ospedale di Jeni-Kioi  
Durante la guerra del 1855—1856  
La Patria Riconoscete  
Onorato Riposo qui decretava  
MDCCLXXXIII

Բաց աստի կը տեսնուին շատ մը ուրիշ շիրիմներ ալ, սոյն թուականին հոն թաղուած Իտալական զօրքերու գերեզմաններուն վրայ կանգնուած :

Այսպէս ի սկզբան անդ զինուորաց պատկանեալ գերեզմանատունս, մէկ երկու տարի յետոյ կ'ըլլայ Կ. Պոլսոյ Լատին Հասարակութեան ընդհանուրին գերեզմանատունը : Թէ որ թուականին Լատին Հասարակութիւնը սկսած է իւր ննջեցեալները հոս թաղել, ճշգրիտ գաղափար մը ունենալու համար, զիմեցինք գերեզմանատանս մատրանապետ քահանային, Don Jean Baptiste Filippucci, որ ցոյց տուաւ ինձ մատեան մը, որուն մէջ նշանակուած էին կանոնաւոր կերպով ամէն ննջեցելոց անունն եւ թուականը թաղման : Աչքէ անցընելով սոյն մատեանը, տեսայ որ Լատին Հասարակութենէ առաջին անգամ հոս թաղուողը կ'ըլլայ 1859 Մայիսին : Մատեան մը ուր սոյն թուականէն սկսեալ մինչեւ ցայսօր մաքուր պահուած եւ արձանագրուած են գերեզմանատանս դռնէն ներս բերուած ննջեցեալներու անունն եւ թուականը մի առ մի . օրինակելի մատեան մը ստուգիլ : Սոյն թուականին գերեզմանատանս քահանան եղած է Տօն Անթուան Ճօրձօվիչ անուն անձը, որ տարիներով վարած էր իւր տխրական պաշտօնը :

Յընթացս ժամանակաց գերեզմանատունս աւելի կ'ընդարձակուի, շուրջը գտնուած գետիններն ալ գնելով եւ բարձր քարաշէն որմերով պատելով, որուն դրան վրայ կը կարդանք այսօրս «Cimetière Catholique Latin» դրութիւնը : Բացի գերեզմանատանս մէջ տեսնուած շիրիմներու արձանագրութիւններէն եւ օրինակելի կանոնաւոր պահուած ննջեցելոց մատեանէն, այս օրս Լատին Հասարակութեան մէջ կան ալեւորներ որոնք կը հաստատեն մեր սոյն տողերը :

Վերոյիշեալ թուականէն (1859) սկսեալ Բանկալթի՝ Համամ փողոցի կողմը գտնուած սոյն գերեզմանատունն՝ Լատին

Հասարակութեան ննջեցելոց հանգստեան տեղի ըլլալէ յետոյ, հին՝ նախկին գերեզմանատան հողին տակ, թաղուածներու ոսկրոտիքը կը փոխադրեն այս տեղ, ինչպէս նաեւ ամբողջ գերեզմանաքարերը : Բնականաբար որոնք որ նոյն ժամանակ ունէին կենդանի ազգական, մասնաւոր տեղ գնելով, շիրիմները եւ ննջեցելոց ոսկրոտիքը կը փոխադրեն հոս, առանձին ընտանեկան տեղոյ մը վրայ կանգնելով, ինչպէս կը տեսնուին այս օրս շատ մը շիրիմներ հին գերեզմանատունէն բերուած եւ կանգնուած : Իսկ որոնք որ կենդանի մերձաւորներ չունէին, ասոնց ամէնուն ոսկրոտիքն ալ կը փոխադրեն հոս, անմոռաց յիշատակ պահելու համար, գերեզմանատան մէկ կողմը կը շինեն դամբարան մը, 6·25 մէտր երկայն, 3·50 մէտր լայն եւ 5 մէտր բարձ, չորեքանկիւն շէնք մը, անկիւններուն առջեւ նոյնպէս չորեքանկիւն բարձր ձեւաւոր սիւներ, եւ ամբողջ շէնքն եւ սիւնները, ինչպէս նաեւ չորս եզերքը գետինը, կը շարեն վրայէ վրայ հին գերեզմանաքարերը, մեծ ու պզտիկ քովէ քով՝ վրայէ վրայ գետեղելով, ամփոփելով ներքեւը փոխադրուած բերուած ոսկրոտիքը : Ահա այս շէնքին արեւելեան կողմը վերը կը տեսնենք մարմարիտն սպիտակ քար մ'ալ հետեւեալ քանդակագորութեամբ, որ ապացոյց մըն է մեր այս տողերուն :

Ancien Cimetière des Grands-Champs  
A Bei-Oghlou Pera  
Exhumation et Translation ici en 1864  
Pierres Tombales provenant dudit Cimetière  
Ossuaire Général Erigé en 1870.

Այսպէս Լատին Հասարակութիւնը Բանկալթիի կողմը գերեզմանատուն մը ունենալէ եւ նախկին գերեզմանատան քարերը շիրիմները եւ ննջեցելոց ոսկրոտիքը հոս փոխա-

դրել է յետոյ, կառավարութիւնը կը դնէ նախկին գերեզմանավայրը եւ կը դարձնէ Հասարակաց Պարտէզ մը, այժմեան «Jardin Public»ը: Այս օրս սոյն պարտէզը այցելող մը բնաւ մտքէն չանցնէր թէ այդ ծառերով ծաղիկներով զարդարուած դուարձութեան տեղը, ժամանակ մը՝ քանի մը տասնեակ տարիներ յառաջ, եղած էր այս՝ ծառերով եւ ծաղիկներով շիրիմներով զարդարուած տխուր մտածութեանց վայր մը՝ գերեզմանատուն մը:

Գ. Վերոյիշեալ թուականէն յետոյ (1865) Յոյն եւ Հայ Հասարակութեանց համար Շիրչի վերի կողմերը կը տրուի ընդարձակ գետիններ՝ գերեզմանատուն ընելու: Եւ ահա սոյն թուականէն սկսեալ Հայ Հասարակութիւնը կը դադրեցնէ թաղել ննջեցեալները Բանկալթի Հարպիէի քով գտնուած գերեզմանատան մէջ, եւ կ'ըլլայ իրենց ննջեցեալներու հանգրտեան բնակարան Շիրչի կողմը, այժմեան գերեզմանատունը: Բանկալթիի հին գերեզմանատան վայրը տակաւին այս օրս կը տեսնուի, միայն իւր նախկին ունեցած ընդարձակութիւնը չէ մնացած. յրեթացս վերջին տարիներու՝ քաղաքապետութիւնը Բանկալթի—Շիրչի երկարող ճամբան ընդարձակելու համար, գրեթէ 4—5 մէտր դէպի ներս քաշել տուած է ճամբուն վրայ երկարող որմը, որով բաւական տեղ կորսուած է: Նոյնպէս գերեզմանոցի կռնակը գտնուող՝ ժամանակ մը Աւատրիական՝ այժմ Գաղղիական հիւանդանոցի երթեւեկը աւելի դիւրացնելու համար, գերեզմանոցիս մէջտեղէն գրեթէ 10 մէտր լայնութեամբ ճամբայ մը բացուած է, որով կորսուած է նոյնպէս բաւական գետին մը: Սոյն ճամբուն յատուկ լայն մուտքին՝ դրան վրայ կը տեսնուի գրութիւն մը լատին գրով «Ermeni Kabristani». տակն ալ հայերէն «Գերեզմանատուն Հայոց» գրուած:

Մինչեւ 1865 սոյն գերեզմանատան հողին տակ թաղուած

ննջեցեալներու ոսկրոտիքը տակաւին կը մնան իրենց տեղը, վրանին դրուած գերեզմանաքարերը ցիր ու ցան կը տեսնուին, ոմանք դրուած տեղերնին անշարժ մնացած, ոմանք տեղերնէն շարժած: Համաձայնականներու զօրքերը մինչ կը գտնուէին Կ. Պոլիս (1920—1922) գերեզմանոցիս մէկ մասն ըրած էին իրենց գնդախաղի վայր, ըստ հետեւորդի գերեզմանաքարերը տեղերնէն վերցուած՝ տարուած ամփոփուած էին որմերու առջեւ: Ասոնց մեկնելէն յետոյ, դարձեալ գերեզմանաքարերը բերուեցան դրուեցան իրենց տեղը, սակայն բնականաբար ամէն քար իւր նախկին տեղը, իւր վրան քանդակեալ անձին ոսկերաց վրայ դրուեցաւ ըսել եւ հաստատել կարելի չէ:

Գերեզմանատան քարերէն շիրիմներէն մաս մը յրեթացս ժամանակաց տարուած են գերեզմանատան հարաւային կողմը կառուցուած Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն առաջակողմը սանդուխներ շինելու, պարտէզին աջ ու ձախ կողմը բարձրադիր վայրերը զարդարելու, քով քովի շարելով, ոմանք կոտրած՝ ոմանք ամբողջ, ոմանց վրայի քանդակեալ գրութիւնն աւրուած մաշած, ինչպէս յայտնի կը տեսնէ այս ամէնն՝ վայրկեան մը եկեղեցւոյս պարտէզին դռնէն ներս մտնողը եւ աջ ու ձախ ակնարկ մը նետողը:

Նոյնպէս Բերայի Պալըզ Պազար թաղին մէջ կառուցուած Ս. Երրորդութեան եկեղեցին, որ շինուած է «Ի Պատրիարգութեան Ստեփանոս Արքեպիսկոպոսի Հայոց. ՌՄՁէ» թուականին, ինչպէս կը կարդանք եկեղեցւոյս աւագ դրան վրայ՝ որմին մէջ հաստատուած մարմարիոն քարին վրայ եղած արձանագրութիւնը. սոյն եկեղեցւոյն այցելութիւն ընողը՝ եթէ ակնարկ մը նետէ եկեղեցւոյս առաջակողմը եւ աջ ու ձախ գտնուած գաւիթներուն յատակը շարուած բազմաթիւ քարերուն վրայ եւ ուշի ուշով նայի, պիտի տեսնէ որ այս բազմաթիւ սպիտակ մարմարիոն քարերը՝ մեծ ու փոքր՝ եղած

են ժամանակ մը գերեզմանաքարեր, յետոյ եկեղեցւոյս գաւիթը զարդարելու համար բերուած են Բանկալթիի գերեզմանոցէն, ինչպէս կը վկայեն նաեւ ալեւոր անձինքներ: Այս քարերուն ոմանց վրայ կը տեսնուին յիշատակագրութեանց մնացորդ գրերը, ոմանց վրայ գրուած՝ քանդակուածն ալ բոլորովին անհետացած:

Նմանապէս գերեզմանոցիս դիմաց շինուած Ս. Յակոբ Անկելանոցի պարտէզը կը տեսնուին գերեզմանաքարեր՝ որոնք յընթացս ժամանակաց սոյն տեղէն՝ գերեզմանոցէն հոն տարուած են եւ դրուած քով քովի, այս քարերու յիշատակագրութիւնները ընդօրինակուած, պիտի տեսնէ ընթերցողը երկասիրութեանս մէջ:

Այսպէս Բանկալթիի գերեզմանատան մէջ թաղուած ննջեցեալներու վրայ դրուած քարերը հոս հոն տարուելէ՝ փոխադրուելէ յետոյ, տակաւին սոյն տեղը այցելութիւն մ'ընողը կը տեսնէ հարիւրաւոր գերեզմանաքարեր, որոնց վրայ քանդակեալ յիշատակագրութիւնները՝ ոմանք մաքուր մնացած են, ոմանք անընթեռնելի դարձած են:

Հայ Հասարակութեան ունեցած նախկին՝ Բանկալթիի եւ արդի Շիշիի գերեզմանատանց վրայ՝ մանրամասնօրէն գրուած կը կարդանք «Ազգային Գերեզմանատուն Հայոց Շիշիի» գրքին մէջ, զոր հաւաքած եւ հրատարակած են Գառնիկ Ատիլ Տ. Գասպարեան եւ Հրանդ Յ. Սշտեան, տպագրեալ Կ. Պոլիս 1922. Տպագ. Օ. Արզուման:

Լատին եւ Հայ Հասարակութեան ունեցած գերեզմանատանց վրայ այս ընդհանուր ակնարկը նետելէ եւ համառօտ դազափար մը կազմելէ յետոյ, կ'անցնինք մեր բուն նպատակին, որ է Կաթողիկէ Հայոց ունեցած գերեզմանատանց վրայ:

## ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՅ ՆԱԽԿԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՎԱՅԻՐԸ

Կ. Պոլսոյ Կաթ. Հայ Հասարակութիւնը, Բերայի եւ Ղաւթիոյ կողմերը բնակողները, անցեալ տարիներու դարերու շրջանին, իրենց ննջեցեալները կը թաղէին՝ ոմանք Լատինաց գերեզմանոցը, այժմեան Հասարակաց Պարտէզին մէջ, եւ ոմանք՝ մեծագոյն մասը Բանկալթիի Ազգային Գերեզմանոցի վայրը: Ալեւորներու վկայութիւնը մէկզի թողլով, իբր յայտնի ապացոյց կը գտնենք մեր այս տողերուն, Լատինաց այժմեան գերեզմանատան մէջ գտնուած գերեզմանաքարերու վրայ փորագրուած յիշատակագրութիւնները:

Ինչպէս վերագոյն յիշեցինք, Լատին Հասարակութիւնը երբ իրենց նախկին գերեզմանատան մէջ այլ եւս ննջեցեալ թաղել վերջ կու տայ, հոն թաղուած հարիւրաւոր ննջեցեալներու ոսկրոտիքը կը փոխադրեն նոր գերեզմանոցի մէջ. կը տանին նաեւ ամբողջ գերեզմանաքարերն ալ եւ այս քարերն անկորուստ, պահելու համար կը շարեն վրայէ վրայ, գեղեցիկ բարձր քառակուսի բաւական ընդարձակ յիշատակարան մը կը կանգնեն. փոխադրուած ոսկրոտիքն ամփոփելով այս յիշատակարանի տակը (տես էջ 11): Ահա այս շինուած կանգնուած յիշատակարանին՝ վրայէ վրայ գետեղուած շարուած՝ լատին գրերով քանդակեալ գերեզմանաքարերուն մէջ, աջ ու ձախ, ցածն ու բարձրը, եզերքը՝ կը տեսնուին նաեւ հայ գրերով քանդակուած գերեզմանաքարեր ալ, ոմանք ընթեռնելի, ոմանք բոլորովին անընթեռնելի դարձած: Սոյն կանգնուած յիշատակարանը կը գտնուի գերեզմանատան մատրան առաջակողմը՝ աջ դին՝ քանի մը քայլ անդին: Հագիւ ընթեռնելի մնացածները են հետեւեալները, զորս խնամով ընդօրինակած՝ կը դնենք հոս, իբր ապացոյց մեր վերոյիշեալ տողերուն:

1. Վիդոր Զամպետա  
Այս է երկու քորֆ ալ Նահատակ Տէր Կոմիտասին  
եւ հայր սոցա պարօն Մկրտիչ Ապարանեցին  
Վիդոր աղջիկն ծնաւ 1730 եւ երեքին  
եւ ամսեանն Օգոստոսի 30 եւ մեկին  
եւ ծնաւ աղջիկն Զամպետա 1730 եւ հնգին  
եւ ամսեանն Մարտի քսան եւ երկուքին  
Որ փոխեցան առ Յիսուս երկուքն մեկ աւորին  
Թվին Փրկչին 1740 եւ մեկին  
եւ ամսեան Օգոստոսի 20 ուրին  
եւ ով յիշեն սոքա բարեխօս լինին իրատաստանին :

2. Այս տապանը Զո...  
ղայեցի...  
Ռեանեանի որդի  
Ողորմելի Գասպա  
րին է. քվին ՌձԶԳ.

3. Այս է տապան Ապրնեցի  
Պետրոսի որդի Ըռափի  
իլին որ փոխեցաւ  
առ Գրիստոս քվ. ՌձԼԹ.  
Մայիսի Զ.

4. Տապանս այս հանգստեանի  
Պէկօշիցի Սամանիեանի  
Փեսա Սոմաֆէշ Ազասիի

16

Հէլէրու հօօնա Մուսա անվանի  
Հանգեաւ յամի 1778 Յունիսի մէկի  
Ոք հանդիպի այսմը շիրմի  
Ասէ ողջոյն ընդ հայրմերի :

5. Շիրիմս այս հանգստարան  
Արապկերցոյ ֆաղափական  
Տոհմիւ ընչեղ ազնուական  
Որ կա եղեալ ի սոյն տապան  
Հայրն է մահտեսի Սիմէվոնին  
Որդին սա է Պապիկ Ազան  
Ի տար աշխար եղբարք սորան  
Լեհաստանի բնակեալ կան  
Քէերիպարի վանառական  
Սա էկեալ աստ սոյն քվական  
Էհար ժամտախտն աստկական  
Հանդիպողքն ողորմիս տան  
1778 :

6. Այս է տապան հանգս  
տեան Էնկիւրիցի Մա  
րուշեան Տէր Պետրո  
սըն որ փոխեցաւ աստի  
կենացս քուականիս  
1780  
Ամսեանն Նոյեմբերին  
26ին :



17

7. Այս է տապանքս ի հանգրստ  
եան Լեհաց յերկրէն Մօ  
հիլօլցի Պօհտան Մարի  
Ղիզիմնէ որ փոխեցաւ ի կեա  
նս քվ. 1796 Ապրիլի 22 :

8. ...էհլիեան Հալէպլի քերզի Օհաննէս  
Տիւնեանն սօնու եթիշտի պէն Օհաննէսա  
...աւուն մարազը քափիլ պըրափուր պէնի մէգարէ  
ագրապալար տօսուար կէօրիւմէգ օլտու էթրափա  
սագըն ագրանլար պիլէ հիչ օլտուլար քիհանտէ  
էյ վահ կէննիլիմէ պիթտի իւչ կիւն իչիմտէ  
եաշըմըն քէմալի օթուգ սէփիգտէ  
նէլէման վէրմէտի սէփասըն սիւրմէյէ  
անէլէ ալըպ քէնիմի աթար քիւրապէ  
պունլարը օֆույուպ ունուքմայըն՝ տիւնատէ  
պու կիւն պանա իսէ եարըն սիզիբէ  
Սէնէ հագրէթի իսա 1815  
Նոյեմբերին 1 ինտէ :

Ինչպէս վերագոյն յիշեցինք Կաթ. Հայ հասարակութիւնը  
անցեալ տարիներու շրջանին կը թաղէր նաեւ իւր ննջեցեալ-  
ները եւ առաւելագոյն մասամբ Բանկալթիի Աղբայրին գերեզ-  
մանոցին մէջ. Ս. Յակոբ Անկելանոցի դիմաց՝ Հարպիէ  
անուանեալ զօրանոցի քով գտնուած ընդարձակ գերեզմանա-  
տան մէջ: Այս օրս տակաւին կ'ապրին ծերունիներ՝ որոնք  
կը հաստատեն թէ իրենց նախնիքը թաղուած են այս գերեզ-  
մանատան հողերուն տակ: Ի մէջ այլոց Լազեան Օննիկ անուն  
(ծն. 1849 Յուն. 13) ծերունին կ'ըսէ թէ իւր հայրը Յովսէփ  
թաղուած է հոս 1863 Օգոստոսի մէջ: Ոչ միայն այս անձը,

այլ ուրիշ ալեւորներ կը հաստատեն եւ կ'ըսեն թէ իրենց  
տոհմէն այս կամ այն անձը թաղուած է հոն: Այժմեան գե-  
րեզմանատան ննջեցելոց մատենանին մէջ կը կարդանք նաեւ  
գրութիւն մը, մեր այս տողերուն իբր ապացոյց. «1921  
Նոյեմբեր Ալլահվէրտեան ննջեցելոց ոսկորտիք Ս. Յակոբայ  
դիմաց գերեզմանոցէն փոխադրեալ» իրենց սեփական դամ-  
բարանին տակ ամփոփուած :

Բացի կենդանի լեզուներու վկայութենէն, եթէ շրջան  
մ'ընենք սոյն գերեզմանատանս մէջ, քով քովի շարուած բազ-  
մաթիւ գերեզմանաքարերու մէջ կը տեսնենք նաեւ Կաթ.  
Հայերու պատկանեալ գերեզմանաքարեր, որոնցմէ շատերու  
վրայ քանդակուած յիշատակագրութիւնը անընթեռնի դար-  
ձած են: Ըստ վկայութեան ալեւորներու Կաթ. Հայերը իրենց  
ննջեցեալներու հողին վրայ դրած քարերուն՝ յիշատակարան  
գրած ժամանակնին, սովոր էին քարին ճակատը՝ յիշատա-  
կագրութեան վերը կամ տակը Ք դիրը փորագրել, «Քաթո-  
լիկ» բառին տեղ: Ահա այն բազմաթիւ գերեզմանաքարերու  
մէջ կը գտնենք Ք գրով շիրիմներ, որոշ եւ անջնջելի մնա-  
ցած: Կը տեսնենք նաեւ գերեզմանաքարեր ալ որոնց վրայ  
փորագրուած այս Ք դիրը յընթացս ժամանակաց աւրած, փո-  
րած են գործիքով մը, սակայն յայտնի կը տեսնուի Ք գրին  
տեղը: Թէ ինչ նպատակաւ ջնջուած՝ փորուած է այս քարե-  
րուն վրայի Ք դիրը, աւելորդ է յառաջ բերել:

Այս քարերէն քանի մը տասնեակ փոխադրուած են յըն-  
թացս ժամանակաց Ս. Յակոբայ Անկելանոցի պարտէզը  
(տես յետոյ): Իսկ տակաւին գտնուածներէն քանի մը տաս-  
նեակ ընդօրինակելով, թուականի կարգով կը դնենք հոս:  
Կային այո՛՛ ուրիշ Ք գրով գերեզմանաքարեր ալ, ընդ-  
օրինակել էր մեր բաղձանքը ամէնն ալ, սակայն Հկարողա-  
ցանք կատարել այս մեր բաղձանքը, որովհետեւ անընթեռնելի  
դարձած էին:

Ք

1.

Այս է տապան հանգստեան Պասմանի Սարգսի կողակցին Հոռոբսիմայի որ գեղեցիկ տեսեամբ փոխեցաւ անանց կեանս թ՛վին ՌճիՔ. Օգոստոսի ԻՔ օրն կիրակի. ասացէ՛ք Աստուած ողորմի

Ք

2.

Այս է տապան հանգստեան հալաքացի Ոսկերիչ Աբրահամին դստերն Կատար ինէին որ հանգեաւ թ՛վ. ՌճԾ

Այս է տապան հանգստեան Ղալաքացի Ոսկերիչ Աբրահամի կողակից Հոլրփին որ հանգեաւ թ՛վ. ՌճԾ

Ք.\* 1

3.

Այս է տապան հանգստեան. Մկրտիչի որդի հափամաջի Պետրոս սին որ փոխեցաւ ի կեանս թ՛վ. ՌճԿԹ/ին.

<sup>1</sup> Աստղանիչ Ք գերը ջնջուած է քարերուն վրայէն:

Ք.

4.

Ի ներքոյ տապանիս է անփոփեալ Աթանասի դուստր Զիւմրիւտն որ ալանդեաց գիոզին թ՛վ. ՌճՂԱ ին վսյ հանդիպողացոյ միով հայրմերիւ յիշել աղաչի:

Ք.

5.

Այս է տապան հանգստեան Քօջէկ օղլուի փեսայ Պաղնի օղլու Նիկոէլու տիացու Կարապետին որ փոխեցաւ ի կեանս թ՛վ. ՌճՂԵ.

Ք.\*

6.

Հագստարանս այս շիրմի Նարվեր գիւղէն հացագործի մահտեսի Սրապին որ փոխեցաւ ի կեանս թ՛վ. ՌճՂԸին.

Ք.

7.

Այս է տապան հան  
գտեան Ամբ  
արցումի որդի  
Յովսէփին որ  
փոխեցաւ ի կեանս  
Քվ. ՌՄ.

Ք.

8.

Այս է  
Տապան հան  
գտեան Զիլին  
կիր Օզլու Գրիգոր  
ի որդի Արուբին որ  
հանգեաւ ի կեանս  
Թ. Տանկաց.  
ՌՄԸ.

Ք.\*

9.

Այս է տապան  
հանգտեան Էնկիւ  
արիցի Նուպունա  
կի որդի հանգուցե  
ալ Սոփնու Թոր  
նսին 1766.

Ք.\*

10.

Այս է տապան հա  
նգտեան Մողոր  
ձորցի Գասարի  
որդի Պետրոսին  
Քվ. ՌՄԺԵ. ուլիսին  
Ա.ին.

Ք.

11.

Այս է տապան  
Ղալաքացի էլ  
մասի կողակ  
ից Միւլին  
հանգեաւ Քվ.  
ՌՄԼԵ.

Այս է տապան  
Ղալաքացի էլ  
մասի որդի  
Թումասըն  
հանգեաւ Քվ.  
ՌՄԺԵ.

Ք.\*

12.

Այս է տապան հան  
գտեան Արեւել  
ցի Բազաբէն Սաք  
լէլու Փէտէրենց  
Ալիքսանի որդի  
Սարգիսին որ հան  
գեաւ ի կեանս Թ  
ՌՄԺԶ. Օգոստոսի ժԲ.

13.

Այս է տապան հալ  
աքացի Ապտուլահ  
եան Սըբմաֆէշ  
Յուրմուզի որդի  
հազարոսին քվ.

ՌՄԺԶ.

Ք.

—

Ք.

14.

Փոքրիկ Յովհաննէս որդի սիրական  
փոքր Յակոբայ Կարնեանց կոչեցեալ  
ի հնգետասան ամաց ի լրման  
... գծադիկ ժանտախտէ հարեալ  
մնայ աստ յուսով յաւուր նորոգման  
գարդարիլ լուսով փառաց երանեալ  
ամի Տեանն 1770.

—

Ք.

15.

Տապանս է Կրակեան Գրիգոր աղայի  
եւ կողակցի նրա Փափագեան  
Թագուհի հաքունի.

1770 ի Յունիսի 12.

—

Ք.\*

16.

Այս է տապան  
Հանգստեան Ղա  
լաքացի Կիւլմ

24

էգ Օղլու Անտոն  
աղային կողակից  
Շահգաստէ հաքու  
նն որ փոխեցաւ ի կե  
նս քվ. ՌՄԻԲ

—

Ք.

17.

Տապանս այս է  
Էնկուրլու Մար  
հար Օղլու Սոֆնու  
տամատ Յօհաննէսէ  
քվին ՌՄԻԲ ին  
ունվարի ԻԲ ին.

—

Ք.\*

18.

Այս է տապան հանգստեանի  
Սումաֆէշ Սամանեանի  
Դուստր գոլով Աղասիյի  
Սիմախաքունի Մորջորջի  
Հանգեաւ հայոց քուականի  
Հազար երկու հարուր ժԹի  
ի ամսեանն Դէկտեմբերի  
Որք հանդիպի յայսմ շիրմի  
Ասէ ողջոյն ընդ հայրմերի.

—

25

Ք.

19.

Այս է տապան՝ հան  
գատեան՝ հալաթ-  
նի՝ Թարթոշնի՝ և  
օնայ՝ Նիկոզոսի՝  
որդի Յանտօնիին՝  
որ հանգեաւ կեանս  
Թ. ՌՄԻԶին.

Ք.

20.

Եփրոսինէս դուստր բարի.  
Որ սահաթնի Ղազարոսեան.  
Քարմ հասակաւ հարսն լինի.  
Միֆայելի որ Սօրդունեան.  
Որքան մնաց մօրն յարգանդի.  
Այնքան կեցեալ յետ...  
Եղաւ կոծով յայս տապանի.  
Ատեալ սըրով ժանտախտական.  
Ամի Փրկչին 1778.

Ք.

21. Այս Զիչիլիայ  
քոյրն սորա  
պայծառ դիմօֆ  
եւ կոյս տղա՝  
չորեփտասան՝  
ամաց էր սա՝

Պերոնուրս այս  
նոր զարգացեալ  
հնգետասան՝  
ամօֆ լըցեալ  
անկարծ մահու  
հանդիպեցեալ՝

26

յորժամ էհաս  
մահն սըմա՝  
աստ ամփոփեալ  
կան երկոքին  
մարգարտատիպ՝  
ակունֆ անգին՝  
Քողեալ լալով եւ կաթոզին  
գմայր իւրեանց  
հանի Իսկուհին.

եւ ի շիրմիս  
այս հանգուցեալ  
Հայոց հագար  
Երկհարիւրին  
ֆսան եւ եօթն աւել Քվ  
որդի էր սա  
հավուխնուիին  
Ծարուկ անուամբ  
մահտեսիին.

Ք.

22.

Այս է տապան՝ հան  
գատեան՝ կեսարացի  
Սուվանի յուսդա՝  
Սըրապիոնի՝ կողակից  
Յուլիմպայ՝ հաթու  
նին՝ որ հանգեաւ ի կեա  
նս Քվ. ՌՄԼԱին.

Ք.

23.

Այս է տապան Տիրուհիյի  
դստեր Սօփեալը Եղիագարի  
ամուսնանայ ի կարգի աշխարհի  
ընդ Սամաննի օղու Անտօնի  
ի ֆառասուն եւ վեց ամենի  
յաստեաց յանանց կեանս փոխի  
յամի Տեառն 1786 ի Դեկտ. 2.

27

Ք.\*

24.

Հանգուցեալ կայ յայսմ շիրմի  
Որդին Պարօն Մանուելի  
Որ մականուամբ Բսա ոջօրջի  
Պարօն Յօհաննէս Պաղտատի  
Հիւանդանա եւ մեռանի  
Իսներկամեա ժամանակի  
Որք թողլով աստ դուստր եւ որդի  
Եւ իւր խոհեմ տիկինն այրի  
Ամի Տեառն 1789 Ապրիլի 23ին.

—

Ք.

25.

Մատաղ հասակաւ ի շիրմիս ագանդ  
Վերոնիգ Խաթուն պահի ի յաւանդ  
Ազնիւ Գէորգին դուստր հնագանդ  
Սիրովն Փրկչին վառեալ ջերմեռանդ  
Նախնիօք սիրական հոչակեալ տիկին  
Պարօն Յովսէփին վայելչագեղ կին  
Արդ սա ի ծնունդ որդւոյն երկրորդի  
Ծնաւ եւ ինքեան վերջի օր մթին  
Մուգ անհնարին ազգայնոյն շնորհե'աց  
Մանասէ եղբօր սրտին նմեաց  
Մինչ աստի չուեց ի յոյսն աւետեաց  
Յամի Տեառն 1791 Մարտի 23.

—

Ք.

26.

Այս է տապան հանգստի  
Սիլիստրէցի նալ  
պանտ Թումասի  
որդի մաղազա  
նի Գրիգորին  
որ հանգեաւ ի  
կեանս թՎ. ՌՄԽԲ.

—

Ք.

27.

Այս է տապան հանգստեան  
Գէորգ աղայի կեննեան  
Հաստչին բոլորից է սահման անդարձ  
Ի հողոյ առար՝ անդէն ի հող դարձ  
Տուր գաւանդ իմ ինձ ծառայ գերեդարձ  
Զերծեալ ի վշտաց ի հանգիստ քոյ դարձ.

—

Մովսէս էր հայր անոս յարգի  
Յովով որդւովք եւ սա ծաղկի  
Վաթսուն եւ վեց ի հասակի  
Յաստեաց յանանց կեանս յանկի  
Յամի Տեառն 1793 ՅԱպր. 14.

—

28. Այս է տապան հանգստեան  
Քիւթահեացի Անէմ  
Գրիգորի որդի հազագ  
Օհանին որ հանգեաւ  
Քվ. հայոց ՌՄԽԹ  
Մայիսի ԻԶ.

29. Վնիւն անդարձ մահու հասեալ  
Ինձ այս տապան եղեւ իմ հանգիստ  
Ի հողոյ առեալ մարմինս ի հող  
Դառցաւ աստ իսկ հոգիս կայ առ  
Ստեղծողին պատկեր Աստուծոյ դուստր  
Տէր Պետրոսեան Մինասայ Հռիփսիմէ  
Կոչիմ վեշտասան ամաց յուսով  
Յարութեան աստ հանգչիմ  
Յամի Տեառն 1819 Յունվարի 1.

Այս է հանգստեան դամբարան շիրմի  
Տրապիզոնցի Տէր Պետրոսի իրիցկին  
Աննայի որ լցեալ գաւուրս կենաց բարի  
Վարուք երկնային բարեաց լինի ժառ  
անգորդ անջինջ յիշատակ եկելոց դարուց  
Յամի Տեառն 1797 Նոյեմբերի 17.

30. Դամբարանքս այս է տեղի  
Դուստր չուհանի Գրիգորի  
Սեդրոսեանց ազնիւ տոհմի  
Թագուհի խաբուն անուանի  
Վարուք համեղ տեսեամբ բարի  
Էր արժանի կոչել փարելի  
Կին վիճակեալ ըստ օրինի  
Յարգի սահաբնի Օհաննէսի  
Յանկարծ անբուժ ցաւօք բռնի  
Քառասուն եւ վեց ամաց կենի  
Ոչ դեղ եւ ոչ բժիշկ օգտի  
Տանի ի տուն յախտենի  
Յետնոցըն բողեալ ողբալի  
Հայցելով հայր մեր եւ ողջոյն լի  
Յամի Տեառն 1801 Ապրիլ 1.

31. Բերսաբէ տիկին դուստր Զաֆարի  
Յոյժ տառապանօք ի կենաց զըրկի  
Մերձ առ Մազլըմի իւրում գուգակցի  
Ամփոփեալ դընի ի սոյն տապանի  
1802 Յունիսի 14:

32. Այս է տապան հանգստեան Պէյօղլուցի  
Այս է տապան հանգստեան Պէյօղլուցի

Մկրտիչի դուստր  
Կուսակրօն եւ պարկե  
շտուհի մարապ  
Ետ Պիրիհիկին որ  
հանգեաւ քվին  
ՌՄԾԲ Հեկտեմբերի 2  
1804.

Մկրտիչի դուստր  
Կուսակրօն եւ պարկ  
եշտուհի մարապ  
Ետ Հոռսիմային  
որ հանգեաւ քվին  
ՌՄԾԲ Մայիսի 6  
1804.

—  
Ք.\*

33.

Այս է տապան հանգստեան  
Վըլանկացի խուշախ  
նի մահտեսի Մախսուտի  
Կողակից Զումրուք  
ին ի քվին ՌՃԿԳ.

Այս է տապան հանգստեան  
Վըլանկացի խուշախնի  
մահտեսի Մախսուտի դուստր  
Թագուհիին հանգեաւ  
ի կեանս քվ. ՌՄԾ.

—  
Ք.

34.

Պու մէգար պերպեր  
Յօհաննէսին Արքին  
Օղլունուն քի վէֆաք էքտի  
վէ պատէն օգուեան տօսուլար  
րահմէք չըֆարա  
Իսամէսի սէնէսի 1812.

32

Ք.

35.

Պարոն վե՛չէն նէվահիրնի  
Ագնիւ բարուք վարուք բարի  
Ռրդի Սօֆնու հաչատուրի  
Տուն Մաղաֆեան տոնմ մայրենի  
Իգնատիոս հարագատի  
Սատար սիրով եւ սիրելի  
Մերձաւորի հեռաւորի  
Եղբայրօրէն սերտ գովելի  
Քատասուն եւ եօթն ամ հասակի  
Աշխատութեամբ եւ արդեամբք լի  
Արդ աստանօր մարմնով հանգչի  
Հոգւով ի վեր առ Տէր փոխի  
1803. Փետր. 19.

36.

Ք.\*

Ինսանըն միւլֆի սահիպի պու ֆատար եէր տիր  
Սաղօլանլերէ քէֆէֆիւր ֆարիգէտին տիր  
Թաշ իւզրէ հազըլը պիֆատէ ֆախտէն տիր  
Կէչմիշին խայրուամէլին զիֆրէ վէսիլէ տիր  
Սահիպի մէֆեան լաֆապի Թուխթամ հօնայ Մինաս տըր  
Էելի Մարի ֆսահիպ քսայիաք շարքը իրֆան տըր  
Մէվլուտ Էնֆարէ հազընըլըֆտէ սահիպի շան տըր  
Ալքմըշ իւչիւնտէ կէլիպ էմրի հաֆ քարիֆ նիհան տըր  
Ճան կէօգիլիլէ պաֆըլսայ պոննայ եքանինսան տըր  
Էնէլին պիլմէեիւպ ֆագաէմէ օղրսեանլար տըր

3

33



Ինսան պիմեզ էնէլ վաֆտին  
Սիւբէր սանըր օլ կէնչիլիին  
Քարար վերտիմ եաշ քէֆմիլին  
Եւրմի սէֆիգտէ էննամին  
Աշրափ օլլու Արթվինլիյն  
Քարիպ Պէտրօս պէն խաֆիրի  
Տիւա էտին շօլ ըուհիմի  
Նայիլ օլսուն մէսրուրիմի  
Ֆի քարիլս հասվիյէ 1815  
Սեպտեմբեր 1.

—  
Ք.\*

40. Նամ Մարգար գըզը վարվառիա իսիմտէ  
Էհլի կարապետ տէվրիշ հէմգատէ  
Վարֆ ըիվայէթի ֆազլի ամէլլէրտէ  
Քեամիլ քապիր օլուր ատիլ տիլլէրտէ  
Էլլի ալթը եաշընէ տախիլ օլտիֆտէ  
Մէվթիմէ պայիս իլլէթի էնէ  
Պէշ էվլատընը ֆանի նիհանտէ  
Թէրֆ իտիւպ չըֆար պարի քաալէյէ  
Պէշ մէհրում իպնիմի մուֆաթտէմատէ  
Տախի կէօրմէզի հուգուրի հաֆտէ  
Բուհի սէմավի քէնէֆֆուզիմտէ  
Ճէմալի հիւտայի նագար իքմէտէ  
Պունու օգույան գարտաշլէրիմտէ  
Սէյֆ կէչմէսինլէր տիւալէրիմտէ  
Թարիլս պին սէֆիզ էիւզ օնալթըտէ  
Մահի Սէպտեմբեր այ սէֆիզիմտէ.

Ք.

41.

Տավուտ գատէ Անտոն  
Աղանըն այալի Մարիամ  
Տուտունըն մէգարընըն  
Նըշան դաշը տըր հէր ֆիմ  
Զիյարէթ էտէր իսէ քահմէթ  
Իլէ եատ իյլեյէ  
Քարիլս միլատի հազ  
ըէթի իւս  
1817.

—  
Ք.

42.

Լուցեաի Տուտուի  
Սիրասնունդ դստեր արժանագովասուն  
Վասլի Բժշկի  
Որ կեան վարելով ժրագլուխ ի կարգի  
Ամս քսան եւ երկու  
Փոխեցաւ յաստեացս ի քառասուն ամի  
հասակի  
Թողեալ զհետ իւր կաթոգին զիւրսն  
Եւ զեօթանեասին որքս  
Առ ի յիշատակ անմոռաց բարեաց  
Ամուսնոյն կանգնէ զմահարձանս  
Աբրահամ Ուզուրլեան  
Յամի 1817 Փետր. 9.

Ք.

43. Ֆանի մի տիր տիրենա Ֆանի պիլիրիզ  
Ֆանիլիկին հէր տէմ վազըն վերիրիզ  
Հիմէթ նե օլտուզուն թէֆմիլ պիլիրիզ  
Կէօրմէտիֆնէ միւլսք ասրի կեչէրիզ  
Թէֆմիլի գարպըն կէօրմէֆ իստերսին  
Նագմա էյլէ հահու պաֆ պու թաշ սեն  
Կիննիլիֆ տեվլեթ բադպեթի պիրտիլէն  
Կեզլետի պու թաշ ալթընտան եէֆտէն  
Յուսէփ Պուրնագեան ֆիսվէթտէ շիրին  
Փետերի Պաղտասար չարշըսըն բիրին  
Նինէ աղլամասըն հեմշերեսի վէ էիլին  
Ետի երկիրմի հաշ մըֆտարի կիւվեինն  
Վուրուլուր թավունտան Պէյֆօզ հատ եէրտէ  
Էնտի պու չուֆուրա գարպը պեշ կիւնտէ  
Սէնէ 1817. Օգոստոս 21.

Ք.

44. Այս տապանի մարմնով դընի  
Ազնիւ Յակոբ այր Նագելի  
Որ ֆաղաֆաւ Կուտինացի  
Վանատական՝ մետաֆէի  
Սա էր որդի հե՛զ Մկրտչի  
Բարուֆ հանդարտ՝ հեգահոզի  
Հիւանդանայ՝ ախտիւ տենդի՝  
Ուստի ի մահ՝ հըրաւիրի  
Զամըս լըցեալ՝ վաթտուն եւ մի

Յուսով բարեաց՝ առ Տէր հանգչի  
Մի հայր մերիւ՝ տուֆ գողորմի  
Ի յօթեանս հօր եւ ընկալցի  
Յամի Տեան 1818 ի 23 Ապրիլ.

—

45. Այս է տապան հանգստեան  
Ալաշֆէցի գիւղէն Կա  
բսանցի Մրկտչի որդի  
Աստուրին թվ. ՌՄԿԹ  
Վարդեվարի Իէ.  
Ք.

—

Ք.

46. Էնֆարէլի Բանկազէր գըզը Բան  
թարնը օղու վալիտէսի Եզսա  
բէթ.  
Եաշար իֆէն՝ պու նիհանտէ.  
Մէմնուն իտիմ՝ հէր հալիմտէ.  
Իհտիեարլըֆ՝ իլլէթինտէն.  
Վէֆաթ էթտիմ՝ պէնտէն.  
Սէֆսէն պիր տիր՝ հաշ ֆէմալիմ.  
Մէֆեանըմ պու՝ նիքէ մալիմ.  
Արգ իտէրիմ՝ սիգէ հալիմ.  
Տուվանըզը՝ փէֆ տիլէրիմ.  
Սէնէ Իսա 1821. Օգոստոս 14.

—

47.

Զոր աշխարհ ոչ կալաւ  
 ... ընդ արեաց  
 Դարձուցին ողջանդամ  
 Ի տուն հայրենեաց  
 Անտոնի Սամանեան  
 Ըզկրտսերն յուստերաց  
 ԸզՅովսէփ վախճանեալ  
 Այս տապան ամփոփեաց  
 Ամաց ԾԱ. Ի Հոկտ. 22. 1821.

—

48.

Արձան Գեորգայ առն  
 Որդւոյ մահտեսի Ռաբայէլի  
 Կարնեցոյ հունտախնեան  
 Ես եմ հողածին սերունդ ի Կարին  
 Սերեալ ի Պօլսեան քաղաք պածալին  
 Պանծայի շքով իմ ազգատոհմին  
 Շուք արկեալ զինեւ ի յելս եւ մըտին  
 Այս փառք սընտրի կապտիչ գողուղի  
 Զըտայ գնաշակ բարեաց աշխարհի  
 Այստից բազմութիւն լծորդ ի միջի  
 հռտորնակ տիոց փոքու եւ մեծի  
 Տասանց երկից էր եւ ութ աւելի  
 Ընթացք մահարձանս տիպ յիշատակի  
 Տիպար ազգայնոյս օժանդակեսցի  
 Ի թուին 1823. Մայիս 8.

—

49.

Էփսէրնեան Յարութիւն :  
 Ով մարդ ուր ե՛ս գործքդ ինչ է .  
 Եկար աշխարհ մահըդ հետ է .  
 Ինչ սերմիէ՛ առած ես նէ .  
 Լեցուն շահը՝ տալու տեղն է :  
 Ես Յարութիւնս՝ ոչ ինչ տեսայ .  
 Եեդմիշ երկու՝ տարի կեցայ .  
 Ուղղափառի՛ գաւակ եղայ .  
 Կեանքս պրծաւ հողը մըտայ .  
 Հինգ հատ գաւակ ողջ թողուցի .  
 Որ զիս յիշեն՝ որդւոց որդի .  
 Ով բարեկամք՝ իմ սիրելի .  
 Զեր սէրն ըլլայ՝ աղօթք յարգի .  
 Յամի Փրկչին 1832 .  
 Յունիսի 5 .

—

50.

Պու գերեզման էնկիւրիւլի  
 Խօնա Միֆայելին քըզի  
 Աննա քատըն տըր ատը Նի  
 սօֆնի Կարապետին էկի  
 Պրաքտը կիթի պու տիւնեայի  
 Հէր քիմ օխուր պու մեգարի  
 Տէսին իւչ ողջոյն հայր մեր  
 Էթսին սիգէ Յիսուս մերհամէթի :  
 (Անթուակահան :)

—

Ք.

51. Թօփուզեան տոհմին ոսկերացն անին  
Արձակեն ուժգին ի վիմէս գոչին  
Եկ մահկանացուդ մի լինիր անգուք  
Տուր մեզ գողորմիս մարդկութեան պարտիս:

(Անթուակահան:)

Ք.

52. Այս է տապան  
Սեբաստացի  
Գուղէն Բրբն  
Իկցի Պօտո  
եան Ղազարոսի  
որդի Միֆայ  
Ելի որդի Պոզ  
ոսին.

(Անթուակահան:)

Վերոյիշեալ սոյն գերեզմանաքարերն ընդօրինակած ժամանակ, սոյն տեղ տեսայ մաքուր մնացած մէկ երկու գերեզմանաքարեր եւս, որոնց վրայ փորագրուած յիշատակագրութիւնները Հ. Եփրեմ Ծ. Վ. Ապրոյեան ընդօրինակած եւ հրատարակել տուած էր «Մեղու»<sup>1</sup> անուն թերթին մէջ. եւ են հետեւեալները:

<sup>1</sup> Մեղու Ա. Տարի. Թիւ 7. 1927 Յուլիս 14, Կ. Պոլիս: Գանի մը ցիրուցան տապանագիրեր Վենետիկի Միսիթարեան Հայրերու Բանկալթիի Ազգ. Գերեզմանատան մէջ. Հ. Եփրեմ Ծ. Վ. Ապրոյեան:

Ո | Կ  
Վ | Ա

53.

Թովմաս վարդապետ Աբբայեան  
Որդի Մանուկի Պուզախեան  
Սահման հողադարձ գարմիս Ադամեան  
Յայս վայր ինձ դիպաւ ի պանդխտութեան,  
Զի թէպէտ ծնունդ էի Բուզանդեան,  
Այլ իմ հայրենիք վանքն էր Աբբայեան,  
Անդ սընեալ ուսմամբ առ ի մանկութեան,  
Հասի աստիճան վարդապետութեան,  
Եւ այսրէն դարձայ ըստ հնագանդութեան  
Ի քարոզ փողոց ապաշխարութեան.  
Անցեալ ի քառասնամն իմոյ հասակիս  
Եւ նժդեհութեան աստ ութերորդիս,  
Եղայ ի դադար հանգըստարանիս.  
Աննահանջ ազդեալ ըզմառ քարոզիս:  
Այլ ի վարձ բարի դոյզն իմ վաստակոց,  
Յուսամ վայելել յէին խնամոց,  
Առեալ ինձ սատար սրբոց հեծելոց,  
Զմաքուր պաղատանս ձեր խնդրուածոց:  
Յամի Տեառն 1793 յԱպրիլի 14:

Ո | Կ  
Վ | Ա

54.

Յարութիւն վարդապետ Աբբայեան  
Մազաքեան Տոհմին Պսակ Պարծանաց  
Մահաիրաւէր փողոյն բարբառ ազդողական  
Խոց կարեւոր յիս նետածիզ ախտ մահական,  
Յե՛ց ցուատիչ կեանց տնկոյս իմ բանական

Քակտեայ մարմինն տապաստ էարկ գիս յայս տապան .  
Քարոգատու գոլով բանին նշմարտութեան  
Տիրանըկար ուղւոյն անձուկ հետեւութեան  
Վարատութեամբ յայս վայր տեղի տարագրութեան ,  
Սպասեալ յուսոյ Տեառն արարչին յօր գալստեան :  
Փոխեցաւ առ Տէր ի հասակի Կ ամաց :

1797 ի Սեպտ . 17 .

55 .

Ո | Կ  
Վ | Ա

Հայր Յակոբոս Մխիթարեան <sup>1</sup>  
Վարդապետ մեծ Տանն Զամչեան  
Ազնիւ ողկոյց իմաստութեան  
Ի ձոյլ հատից ըզգաստութեան ,  
Ոսկիափայլ փող յոքելեան ,  
Բանին կենաց նշմարտութեան .  
Համբերատար աշխատութեան  
Յոգնավաստակ արիութեան .  
Սա հեղինակ Օրագրութեան ,  
Ազգիս մերոյ Աստուածագեան .  
Քաջ չափաբեր երկնից շարժման ,  
Տօմարագէտ ըստոյէկեան .  
Ուրսուներեք ամ լիութեան  
Ծաղկեալ յիւրում կենդանութեան  
Փոխի յաստեաց յերկնից կայան  
Յնծալ ի լոյս արքայութեան :  
1805 . Օգոստոս :

<sup>1</sup> Մեղու . Թիւ 8 . Յուլիս 21 . 1927 :

## ԱՐԳԻ ՇԻՇԼԻԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Երբ այլ եւս Բանկալթիի գերեզմանատան մէջ ննջեցեալ  
Թաղելուն վերջ կը տրուի , Կաթ . Հայ հասարակութիւնը կ'ու-  
նենայ իրեն սեփական գերեզմանատուն մը Շիշլիի կողմը :  
Բանկալթի-Շիշլի գացող հանրակառքերու (Tramways) վեր-  
ջին եւ գլխաւոր կայարանին դիմաց կը տեսնուի Յունաց գե-  
րեզմանատան մեծ դուռը , որուն առջեւէն անցնելով եւ երեք  
հարիւր հանդարտ քայլեր առնելէ յետոյ կը հասնինք Կաթ .  
Հայոց գերեզմանատան պատկանեալ քարահիւս երկուքուկէս  
մէտր բարձր պատը , կից Յունաց գերեզմանատան պատին ,  
որուն քովէն քայլերնիս յառաջ փոխելով եւ 140 քայլ առնելէ  
յետոյ կու գանք կը հասնինք երկաթաշէն երեք դռներու առ-  
ջեւ : Միջավայրի մեծ դրան վրայ աչքերնիս դարձընելով կը  
տեսնենք գրուած , լատին գրով՝

Ermeni Katolik Kabristanı

Գերեզմանատուն Կաթողիկէ Հայոց :

Գերեզմանատանս դրան առջեւէն կ'երկարի դէպի Պէօլիւք  
Տէրէ գացող ճամբան , որուն վրայէն կը տեսնուին անդադար  
ետեւէ ետեւ սրընթաց ինքնաշարժներ , ձիաքարշ կառքեր ,  
դէպի այն կողմը գանուող գիւղերը գացող , կամ այն կողմե-  
ւէն քաղաք վերադարձող : Կը տեսնուին նաեւ հետիտան  
չըջաղայութեան ելլողներու խումբեր , մանաւանդ երբ օդը  
նպաստաւոր է եւ հաճոյական : Գերեզմանոցիս դիմաց գըր-  
նուող մարգագետիններու վրայ , թթենոյ ծառերու շուքե-  
րուն տակ խումբ խումբ ընտանիքներ նստած , մաքուր օդ  
ծծելով կ'անցընեն ժամանակնին : Հանրակառքի երկաթ գիծն  
կ'երկարի ճիշդ մինչեւ գերեզմանոցիս դրան առջեւ եւ հարկ  
տեսնուած ժամանակ , մանաւանդ Մեռելոցի օրեր , կիրակի

օրեր՝ հանրակառքը կու գայ մինչեւ հոս իւր մէջ գտնուած անձինքներով :

Գերեզմանատանս փոքր դռնէն ներս մտնելով, ձախ կողմերնիս կը տեսնենք մատուռ մը փոքրիկ, ուր կը կատարուի եկեղեցական պաշտամունք, Մեռելոցի օրեր կը մատուցուի Պատարագ, ինչպէս նաեւ ուրիշ օրեր ըստ բաղձանաց հաւատացելոց : Աջ կողմերնիս կը տեսնենք փոքրիկ տուն մը կրկին սենեակներով, որոնցմէ միոյն մէջ կը բնակին գերեզմանատանս պահապաններն՝ գործողները եւ միւսը կը պատկանի գերեզմանատանս վարչութեան անդամոց, ուր կը պահուին ննջեցեալներու մատեանները եւ կարելոր տետրներ :

Փոքրիկ մատրանս կռնակի կողմը կը տեսնուի՝ գերեզմանատան որմին կից ծաղկանոց մը՝ շինուած վերջին տարիներս, որուն դրան քով կը կարգանք հետեւեալը .

Ծաղկանոցս  
Կառուցուեցաւ Բարեբար  
ներու նուիրատուքեամբ  
Յամի Տեառն 1924 .

Ծացկանոցս ունի 36 ոտք երկարութիւն եւ 12 ոտք լայնութիւն, ապակիներով գոցուած եւ առջեւի որմն կիսով չափ ապակիով շինուած, ուր կը խնամուին մասնաւոր հոգածութեամբ թաղարներու մէջ տեսակ տեսակ ծաղիկներ եւ բաղձացողը կրնայ գնել եւ տանիլ գնել իւր սիրելւոյն հանգստարանին՝ հողին վրայ : Իսկ մատրանս որմին մէջ՝ արտաքուստ կը տեսնենք մարմարիոն սպիտակ քար մը զետեղուած, հետեւեալ արձանագրութեամբ .

Գերեզմանատուն՝  
Կաթողիկեայ Հայոց  
Պատեցաւ որմով  
ՌՅԻԴ — 1875 :

Նոյնպէս գերեզմանատանս դրան աջ կողմը գտնուած պահապանաց եւ վարչութեան յատուկ շէնքին որմին մէջ կը տեսնուի մարմարիոն սպիտակ քար մըն ալ, որուն վրայ փորագրուած են հետեւեալ տողերը .

Ի Հայրապետութան  
ՏՆ. ՏՆ. Պօղոս Պետրոսի ժԲ .  
Կաթողիկոսի Պատրիարքի Տանն Կիլիկիոյ  
Ի նորոյ կառուցան  
ԳՈՒՈՆ եւ յարակից շինութիւնք  
Գերեզմանատանս Կ. Հայոց  
ՌՅԾԷ — 1908 :

Գերեզմանատանս տեղւոյն նկատմամբ շատ հետամուտ եղանք գտնելու գրութիւն մը Պատրիարքարանի գիւանատան մէջ բայց ի զուր . գտանք միայն գրութիւն մը տաճկերէն զրով եւ լեզուով, որ վերոյգրեալ արձանագրութեան՝ շինութեան հրամանագիրն էր : Հրամանագիր մը կառավարութեան կողմանէ տրուած 1326 նիճրէթի, Ապտիւլ Համիտ Բ. ժամանակին, որով կը տրուի հրաման գերեզմանատան արտաքին մեծ եւ քովն երկու փոքր դռները, ինչպէս յարակից սենեակները շինելու, Պատրիարքարանի կողմանէ տրուելիք 250 ոսկիով :

(Սոյն հրամանագիրը բերաւ ինձ Գեր. Հ. Յովհաննէս Ծ. Վ. Թումայեան. տարինք տաճկադէտ Կուրտիկեան Ստեփան էֆ. կարգալ տուինք. բովանդակութիւնն էր մեր վերոյգրեալ տողերը . 1927. Նոյ. 11. կարգացինք :)

Գերեզմանատանս մէջ շրջան մ'ընելով կը տեսնենք ընդարձակ գետինը բաժնուած սոյլ եւ այլ քառակուսի մասերու եւ ամէն մէկ քառակուսի ուղին սուրբերու անուններով

որոշուած : Աւաջին ուղին Սուրբ Պետրոս , որուն երկու կողմը սոճիի ծառերով զարդարուած են : Սոյն գլխաւոր ճամբուն վերի կողմը կը տեսնենք վայր մը , ապագային մատուռ մը կառուցանելու համար որոշուած , տեղւոյն մէջտեղը կանգնուած է մարմարինոն սպիտակ սիւնակ մը՝ վրան քանդակուած :

Ես եմ  
Յարութիւն  
Էւ  
Կեանք :

Ուղիներու իւրաքանչիւրին անկիւնը՝ ոմանց առջեւ քարահիւս սիւնակ մը շինուած վրան գրուած ուղւոյն անունը , ինչպէս Ս . Սահակ , Ս . Մեսրոպ , Ս . Թադէոս , Ս . Ն . Շնորհալի , Ս . Բարթողիմէոս , Ս . Հովիտիմէ : Իսկ ոմանց անկեան առջեւ երկաթ ձող մը կանգնուած՝ երկաթ տախտակով մը , վրան գրուած ուղւոյն անունը , ինչպէս Ս . Կոմիտաս , Ս . Աննա , Ս . Յովհաննէս , Ս . Մարկոս , Ս . Եղիշէ , Ս . Պողոս , Ս . Մատթէոս , Ս . Գրիգոր Լուսաւորիչ , Ս . Ղուկաս :

Սոյն ճամբաներուն անկիւնները կը տեսնուին փոքրիկ ջրոյ աւազաններ շինուած , որոնց մէջ մասնաւոր խողովակներով կու դայ կը լեցուի Տէրքօղի անուանեալ ջուրը եւ մեծ դիւրութեամբ կը ջրուն շիրիմներու շուրջը տնկուած ծաղիկներն եւ մատաղատունկ ծառերը : Այս աւազաններէն , Ս . Բարթողիմէոս ուղիին անկիւնը շինուած աւազանին վրայ կը կարգանք հետեւեալ տողերը :

Յիշատակ է Մշոյ Նորշէն  
գիւղացի Յովակիմ Տէր Մը  
կըրտիչեանի 27 Յլս . 1924 :

## ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆՍ

Գերեզմանատանս գետինը ըստ պատշաճի հողալու խնամելու՝ բաժանումներ ընելու , ամէն կերպով զարգարելու համար , բնական էր որ պէտք էր ունենալ հողատար անձինքներ , որոնց զործունէութեամբ տխուր վայրս ըլլար բարեզարդուած : Ունեցած է այո՛ գերեզմանատունս յանձնախումբ մը սկիզբէն մինչեւ ցայսօրս , որոնց խնամքով եւ անխոնջ աշխատութեամբ՝ ժամանակ մը ամայի դաշտը գետինը դարձած է կանոնաւոր բաժանումներով , տնկուած ծառերով խնամուած ննջեցելոց հանգստարան մը : Սոյն զործադիր Յանձնախումբին անուններն տարւոյ կարգաւ մի առ մի գրել հետամուտ եղանք , բայց դժգոխտաբար չկրցանք ըստ մեր բաղձանաց գտնել տետր մը՝ մատեան մը որուն մէջ կանոնաւորապէս գրուած ըլլային ասոնց անունները : Ս . Յովհան Ոսկերբեան եկեղեցւոյն սենեակներէն միոյն մէջ , ուր տեղի կ'ունենայ այս օրս սոյն Յանձնախումբին գումարումը՝ ժողովները , պահուած են թուղթեր տետրակներ , ժողովքի արձանագրութիւններ , բայց չկրցայ գտնել տետր մը , որուն մէջ յաջորդաբար գրուած ըլլայ Յանձնախումբիս անգամոց անունները՝ ըստ պատշաճի եւ կարգի :

Սոյն թուղթերուն՝ տետրներուն մէջ գրուած անձանց անուններէն կը տեսնուի որ՝ ոմանք մէկ երկու տարի վարած են իրենց պաշտօնը , ոմանք քանի մը ամիս միայն մասնակցած են Յանձնախումբիս , ոմանք ալ մէկ երկու տարի կատարելէ յետոյ իրենց զործքը՝ հրաժարած են եւ մէկ երկու տարի յետոյ դարձեալ ստանձնած : Այսու ամենայնիւ այս տետրներէն քաղելով ասոնց անունները , կը դնենք հոս թուականի կարգաւ , իբր անմոռաց յիշատակ իրենց զործունէութեան :

- 1875 Ն. Գ. Գարազեան Վ. Պետրոս Կիւղէլ. Միջայէլ Ապոստոլաց.
- 1878 Միհրան Վենսան. Չամիչ Գէորգ.
- 1880 Մանուէլեան. Մկրտիչ Մուրատեան.
- 1881 Բէքմէզեան Կոմ. Սարգիս Տիւղ.
- 1889 Տամատ Յովհաննէս.
- 1893 Սահակ Վ. Գաղանձեան.
- 1897 Ն. Պողոս Գաֆթանձեան. Սերովբէ Աբիկեան. Ա. Ալթուն Օղլու. Մկրտիչ Էնքսէրձեան. Վենսան Գասապեան
- 1901 Ն. Ն. Նարկիլձեան Վ. Կիւրեղեան. Ստեփան Գաղանձեան.
- 1905 Մոմձեան Օննիկ.
- 1906 Համամլեան վարդապ. Լ. Օտապաշեան. Հայկ. Չըպձը. Միմիտեան.
- 1907 Քէչէձեան Վ. Վ. Վ. Մկրտիչեան. Մարաշեան.
- 1907 Վենսան Մուրատեան. Անթուան Անանեան (ճարտարապետ).

- 1909 Յ. Քէօմիւրձեան.
- 1916 Մելքոն Սիրունեան. Բարաղեան Բասթալ. Ժան Թիւլպէնտձեան. Վենսան Բէնպեյեան. Խաչիկ Թօփուղեան. Օննիկ Ազիզեան. Յովսէփ Աղճիկեան.
- 1918 Չուխաձեան.
- 1922 Յովսէփ Վ. Սարուխանեան. Յովսէփ Աղճիկեան. Գրիգոր Հէզիմեան. Օննիկ Ազիզեան. Արամ Բարաղեան. Օննիկ Գապարաձեան. Միհրան Գուրպան. Անդրէ Ալթունեան. Լեւոն Լուսարար. Ս. Միլեան. Պ. Միմիտեան. Բէնպեյեան. Գուրպանեան. Երուանդ Բախձը.
- 1923 Ռափայէլ Վ. Քիւլիւքեան.
- 1923 Լեւոն Լուսարար. Փասթալ Փափաղեան. Ճիվան Չուխաձեան. Անտոն Սրապեան. Բիէր Թիւլպէնտձեան.

- 1924 Յով. Վ. Սարուխանեան. Օննիկ Ազիզեան. Գրիգոր Մըսըրլեան. Միջայէլ Կիւրձեան. Գրիգոր Հէզիմեան.
- 1927 Ն. Արեքսիս Վ. (մատրանապետ).

- Ազարեան Սեթրակ. Գրիգոր Մըսըրլը. Գէորգ Շէխիկեան. Երուանդ Բախձը.
- 1928 Ազարեան Սեթրակ. Գրիգոր Մըսըրլը. Երուանդ Բախձը. Ժողէֆ Գասապեան.

Ներկայ տարւոյս 1929 ի Գերեզմանատանս Յանձնախումբի անդամներն են վերոգրեալ՝ անցեալ տարւոյ անձինքը, որոնք իրենց պաշտօնը ամենայն եռանդեամբ կատարել կը ջանան, ժամանակին պահանջմանց եւ բաղձանաց համաձայն:

Յանձնախումբս ունեցած է մասնաւոր կարգադրութեան որոշումներ, որոնց համաձայն գործել ջանացած է: Սոյն կարգադրութիւնը տպուած կը գտնենք դերեզմանատանս Յանձնախումբի սենեակին մէջ. եւ են հետեւեալները:

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Գերեզմանատան կաթողիկեայ Հայոց

Ի Բերա Ֆէրի-Գիւղ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Մասնաժողով:

Յօդուած Ա. Գերեզմանատան բարեկարգութեանը համար Ազգին կողմանէ առանձին Մասնաժողով մը հաստատուած է:

Յօդուած Բ. Այս Մասնաժողովը չորս անդամներէ կը բաղկանայ, որոնցմէ երեքն աշխարհիկ եւ մին քահանայ է:

Յօդուած Գ. Մասնաժողովի վարչութիւնը երեք տարի պիտի տեւէ: Երեք տարին լրանալէն վերջը, նոյն պաշտօնատեարք կրնան վերստին ընտրուիլ:

Յօդուած Դ. Ժողովոյն պաշտօններն են՝

1. Գերեզմանատան բարեկարգութեանը համար զծուած յատակադժին համեմատ՝ ըստ յետագայ կարգադրութեանց, խնդրողներուն թաղ ծախել, եւ գերեզմանաց տեղերը ցուցնել:

2. Գերեզմանատան հասոյթները ժողովելով պէտք եղած ծախքերը հոգալ:

3. Ելեւմտից հաշուեզրոյն հետ միանգամայն ննջեցելոց յիշատակագիր մը յօրինել: Եւ ամէն տարի սոյն հաշուեզրոյն ու յիշատակագիրը վարչութեան ժողովոյն միջոցաւ Երեսփոխանաց ժողովոյն ներկայացնել:

4. Թաղ զնել ուզողներուն մուրհակ տալ:

ԳՂՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ

Ննջեցելոց ի գերեզմանատուն մտնելն:

Յօդուած Ե. Ննջեցեալները գերեզմանատուն բերող քահանայն պարտաւոր է ննջեցելոյն անունը եւ մականունը գրուած եւ ստորագրուած թուղթ մը հոն դանսուող պաշտօնէին յանձնել:

ԳՂՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ

Թաղք եւ գերեզմանք:

Յօդուած Զ. Գերեզմանատան յատակադժին համեմատ բովանդակ գերեզմանատան երկիրը եօթն գլխաւոր մասի (թարխ) բաժնուած է:

Յօդուած Է. Գերեզմանատան մեծ փողոցին լայնութիւնը

տասն կանգուն է, իսկ երկրորդական փողոցներուն լայնութիւնը ութնական կանգուն են:

Յօդուած Ը. Ննջեցեալները կարգաւ թաղուելու համար գերեզմանատան ամէն մէկ մասը՝ ծախուելու թաղերուն համար, ետեւէ ետեւ երեք կարգի բաժնուած է:

1. Մեծ փողոցին առաջին կարգին խորութիւնը վեց ու կէս կանգուն է:

Այս կարգէն թաղի մը տեղ խնդրողները հինգ կանգուն երեսէն մինչեւ ութը կանգուն ծախու առած թաղերնուն, ամէն մէկ քառակուսի կանգնոյ համար երկու Օսմանեան ոսկի լիրա պիտի հատուցանեն: Իսկ ութ կանգունէն աւելի խնդրողները, ծախու առած բոլոր թաղին ամէն մէկ քառակուսի կանգնոյ համար երեք Օսմանեան ոսկի լիրա պիտի հատուցանեն:

Մեծ փողոցին վրայ թաղ ունեցողները, իրենց իւրաքանչիւր ննջեցելոց թաղման համար պարտաւոր են երեք Օսմանեան ոսկի լիրա հատուցանել գերեզմանատան վարչութեան:

2. Միւս փողոցներուն առաջին կարգի թաղերուն խորութիւնը հինգ կանգուն է:

Այս փողոցներուն առաջին կարգէն թաղի տէր ըլլալ խնդրողները, երեք կանգուն երեսէն մինչեւ վեց կանգուն ծախու առած թաղին, ամէն մէկ քառակուսի կանգնոյ համար մէկ եւ կէս Օսմանեան ոսկի լիրա պիտի հատուցանեն: Իսկ վեց կանգունէն աւելի խնդրողները, ծախու առած բոլոր թաղին ամէն մէկ քառակուսի կանգնոյ համար երկու Օսմանեան լիրա, եւ մէկ քառորդ ոսկի ալ պիտի հատուցանեն:

Այս երկրորդական փողոցներուն առաջին կարգի թաղի տեարք իրենց ամէն մէկ ննջեցելոյն թաղման համար պարտաւոր են երկու Օսմանեան ոսկի հատուցանել:

3. Թէ մեծ, եւ թէ մեւս փողոցներուն երկրորդ կարգի թաղերուն խորութիւնը չորս կանգուն է:

Այս երկրորդ կարգէն թաղի տէր ըլլալ կամեցողները, երեք կանգուն երեսէն մինչեւ վեց կանգուն ծախու առած թաղերուն իւրաքանչիւր քառակուսի կանգնոյ համար մէկ Օսմանեան ոսկի լիւրա պիտի հատուցանեն. իսկ վեց կանգունէն աւելի ուղղոյնը, ծախու առած բոլոր թաղին ամէն մէկ քառակուսի կանգնոյ համար մէկ ու կէս Օսմանեան ոսկի լիւրա հատուցանելու պարտական են:

Երկրորդ կարգի թաղի տեսարք, իրենց ամէն մէկ ննջեցելոյն թաղման համար, պարտական են մէկ ու կէս Օսմանեան ոսկի լիւրա հատուցանելու:

4. Երրորդ կարգի գերեզմանատեղիք՝ Անճնական, այսինքն՝ մէկ ննջեցելոյ մը միայն յատկացած են:

Այս կարգի մասնաւոր գերեզմանատեղեաց իւրաքանչիւրին երեսը մէկ եւ կէս կանգուն, իսկ խորութիւնը երեք կանգուն է:

Ամէն մէկ քառակուսի կանգնոյ համար կէս Օսմանեան ոսկի լիւրա պիտի հատուցանեն:

Այս երրորդ կարգի գերեզմանաց մէջ ննջեցեալները թաղած ժամանակին, պարտաւոր են մէկ Օսմանեան ոսկի լիւրա հատուցանել:

5. Առաջին ու երկրորդ կարգին մէջտեղ եղած փողոցին լայնութիւնը երկու կանգուն է:

Իսկ երկրորդ եւ երրորդ կարգին մէջտեղ եղած փողոցին լայնութիւնը մէկ ու կէս կանգուն է:

6. Առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի թաղի տեսարք, իրենց արուած մուրհակաց համեմատ կը պարտաւորին կամ շինուածով կամ գետնափոր տապանով եւ կամ երկաթեայ վանդակաւ գնած թաղերին որոշել:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

Հասարակաց գերեզմանատեղիք:

Յօդուած Թ. Գերեզմանատան եօթն բաժնուած գլխաւոր մասերուն միջաւայր ընդարձակ երկիրները հասարակաց ննջեցելոց թաղման յատկացած են հետեւեալ կարգադրութեամբք:

1. Գաւազանակրաւ յուղարկուած ննջեցելոց համար, ի վարձ գերեզմանատան, մէկ Օսմանեան ոսկի լիւրա պիտի հատուցուի:

2. Առանց դաւազանակրի յուղարկուած ննջեցելոյն համար կէս Օսմանեան ոսկի լիւրա պիտի հատուցուի:

3. Այն ննջեցելոց համար, զորս Եկեղեցիք եւ Աղքատանոցը, ճրի կը յուղարկեն, գերեզմանատան վարձ չպիտի պահանջուի:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՐԳ

Թաղերուն վերաբերեալք:

Յօդուած Ժ. Առաջին եւ երկրորդ կարգի մէջ ննջեցելոց համար գետնափոր տապան (քավ) շինել կամեցողները, ա՛յն փողոցներուն վրայ թաղի տէր պէտք է ըլլան, ուր գետնի տակէն ջրանցքներ շինուած են:

Յօդուած ԺԱ. Այս կարգադրութիւնքս յառաջմէ մինչեւ ցայսօր առանձին չէնքով, եւ կամ պատերով որոշուած թաղից տէրանցն ալ կը վերաբերին:

Յօդուած ԺԲ. Ամէն թաղ ուղղակի գծով ինչած առանձին բնտանեաց մը միայն կը վերաբերին:

Իսկ եթէ նոյն գերդաստանէն անուղղակի գծով ինչած ազգականաց ննջեցեալները ուղեան նոյն թաղին մէջ թաղել, պէտք է նախ եւ առաջ թաղին բուն տէրոջմէն հրաման ընդունել:

Տոմսակք եւ մուրհակք :

Յօդուած ժԳ. Որպիսի եւ իցէ տոմսակք եւ մուրհակք անպատճառ պէտք է՝ որ գերեզմանատան յատուկ կնքովը զմուռին :

Յօդուած ժԴ. Թաղ ծախու առնողներուն տրուելի մուրհակները վարագայի սահիհէի վրայ գրուած, ի չորրեց պաշտօնէից մասնաժողովոյն ստորագրեալ, Պատրիարքարանին կնքովը վաւերացած եւ նորին գիւանին մէջ արձանագրուած պիտի ըլլայ :

Յօդուած ժԵ. Ուրիշ ո՛ր եւ իցէ ընդունելի դրամոց համար տրուելու ընկալազիրն զանձապետէն միայն ստորագրուելը բաւական է :

Այլ եւ այլ գործողութեանց վերաբերեալ :

Յօդուած ժԶ. Ի գերեզմանատուն բերուած ամէն ննջեցեալք անխտիր քսան եւ չորս ժամ երեսնին բաց, եւ ձեռքերնին ազատ, առանձին տեղ մը պիտի պահուին : Եւ այսպիսի մեռելոց համար այն ամէն կարելի միջոցները եւ զգուշութիւնները ըստ Եւրոպական կանոնաց ի գործ պիտի դրուին :

Յօդուած ժԷ. Գետնափոր տապանաց մէջ հանգչած ննջեցեալք անհրաժեշտ եւ անպատճառ պէտք է որ թաղասանով օծուած, եւ զինկօ կամ կապարեայ արկղաց մէջ դրուին :

Յօդուած ժԸ. Գետնափոր տապանաց շինութեանը սպասել հարկ եղած ժամանակ, որուն երբէք պայմանաժամը վեց ամիսը չպիտի կարենայ անցուիլ, նախորդ յօդուածոյն պայմանին համեմատ ըստ ամենայնի կատարուելէն վերջը, ննջեցեալք յատուկ տեղ մը պահուած պիտի մնան :

Յօդուած ժԹ. Ննջեցեալք ի գերեզմանատուն բերուելով, եթէ քսան եւ չորս ժամուն մէջ որոշեալ տուրքը չհատուցուին, եւ ժԷ. եւ ժԸ. յօդուածոց պայմաններն ի ժամանակին չկատարուին, իսկոյն եւ անմիջապէս հասարակաց գերեզմանատանը մէջ կը թաղուին :

Յօդուած Ի. Հասարակաց գերեզմանաց վրայ քար չպիտի դրուի, եւ եթէ հասարակաց թաղերը լեցուելու ըլլան, հոն թաղուած ննջեցելոց բոլոր ոսկրները առանձին տեղ մը պիտի դրուին :

